ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8664

10 նոյեմբեր 2023թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ 3-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 145/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ռ.Եսայան փողոցի թիվ 25 տան բնակիչ Գյուլնարա Շալվոյի Հովհաննիսյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 19.12.2022թ. տրված թիվ 19122022-04-0044 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զորավար Անդրանիկի 3-րդ թաղամասի թիվ 145/1 հասցեում գտնվող հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զորավար Անդրանիկի 3-րդ թաղամասի թիվ 145/1 հասցեում գտնվող 0.0172հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակելիից փոփոխել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8674Ա

10 Դեկտեմբեր 2023թ.Ք. Էջմիածին

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԽՈՐԴԱՆՈՑԸ ԵՎ ՊԱՐԻՍՊԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 731-Ն և 912-Ն որոշումների պահանջներով, հիմք ընդունելով Կաղաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2023YQ32MN և «Աստղիկ Մանուկյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 096/ կողմից 20.10.2022թ. կազմված հատակագիծը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Թ.Ռոսլինի փողոցում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.0028հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված ընդհանուր 6.7քմ /6.7քմ արտաքին և 5.9քմ ներքին/ մակերեսով խորդանոցը և պարիսպը համարել Վաղարշապատ համայնքի սեփականություն: Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, նրա զբաղեցրած հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, կառուցված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերին:
2. Օրինականացնել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Թ.Ռոսլինի փողոցում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.0028հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 6.7քմ /6.7քմ արտաքին և 5.9քմ ներքին/ մակերեսով խորդանոցը և պարիսպը:
3. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Թ.Ռոսլինի փողոցում գտնվող ընդհանուր 6.7քմ /6.7քմ արտաքին և 5.9քմ ներքին/ մակերեսով խորդանոցը և պարիսպը և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0028հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը առաջարկել գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել կառույցն իրականացնող անձանց՝ Սաքո Կարապետի Մանուկյանին և Հռիփսիմե Անդրանիկի Զարգարյանին:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 86 Ա

10 նոյեմբեր 2023թ. ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով «Աղտղիկ Մանուկյան» ԱՁ-ի / որակավորման վկայական թիվ 096 / կողմից 20.10.2022թ. կազմված հատակագիծը և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002NULBETV.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի սեփականություն հանդիսացող Էջմիածին քաղաքի Թ.Ռոսլինի փողոցում գտնվող խորդանոցին, պարսպին և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0028հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Թ.Ռոսլինի փողոց թիվ 31/4:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8694

10 Դեկտեմբեր 2023թ.

ք. Էջմիածին

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՊԱՐԻՍՊԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 731-Ն և 912-Ն որոշումների պահանջներով, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2023GJ8AUX և «Ջիվան Հարությունյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0390/ կողմից 20.02.2023թ. կազմված հատակագիծը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի 2-րդ փակուղում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.0295հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 9.6քմ / 9.6քմ արտաքին և 9.6քմ ներքին / մակերեսով պարիսպը համարել Վաղարշապատ համայնքի սեփականություն: Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, նրա զբաղեցրած հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, կառուցված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերին:
2. Օրինականացնել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի 2-րդ փակուղում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.0295հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 9.6քմ / 9.6քմ արտաքին և 9.6քմ ներքին / մակերեսով պարիսպը:
3. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի 2-րդ փակուղում գտնվող 9.6քմ / 9.6քմ արտաքին և 9.6քմ ներքին / մակերեսով պարիսպը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0295հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը առաջարկել գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել կառույցն իրականացնող անձանց՝ Մայիս Բարսեղի Աթանյանին և Լևոն Բարսեղի Աթանյանին:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 870Ա

10 նոյեմբեր 2023թ. ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով «Ջիվան Հարությունյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0390/ կողմից 20.02.2023թ. կազմված հատակագիծը և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002SU7UWL6.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի սեփականություն հանդիսացող Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի 2-րդ փակուղում գտնվող պարսպին և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0295հա մակերեսով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Սուրբ Մ.Մաշտոցի փողոց, 2-րդ փակուղի թիվ 79:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8/Հ

11 մայիսի 2023թ. ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԿՈՐՅՈՒՆ ՌՈՍՏՈՄԻ ՄԻՆԱՍՅԱՆԻ ԵՎ ԱՐՄԻՆԵ ՎԱԶԳԵՆԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Շահումյան փողոցի թիվ 32 տան բնակիչ՝ Կորյուն Ռոստոմի Մինասյանի դիմումը պարզվել է, որ.

- համաձայն 17.11.1994թ. տրված սեփականության վկայագրի, ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 09.11.2022թ. վճռի գործ թիվ ԱՐԴ/2832/02/22 և «Աստղիկ Մանուկյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 096/ կողմից 14.02.2023թ. կազմված հատակագծի, Վաղարշապատ համայնքի, Էջմիածին քաղաքի Շահումյան փողոցի թիվ 32 հասցեում գտնվող բնակելի տունը պատկանում է Կորյուն Ռոստոմի Մինասյանին և Արմինե Վազգենի Մկրտչյանին,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 0.0344հա, որի վրա կառուցված է բնակելի տուն.
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 0.0105հա սահմանազատված հողամաս, որի վրա կառուցված է բնակելի նշանակության օժանդակ շինություն,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական բնակավայրերի նպատակային նշանակություն բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված բնակելի տունը, բնակելի նշանակության օժանդակ շինությունը, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ. մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի, Էջմիածին քաղաքի Շահումյան փողոցի թիվ 32 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը, օժանդակ շինությունը և ավել օգտագործվող 0.0105հա մակերեսով հողամասը համարել Կորյուն Ռոստոմի Մինասյանի /ծնված 28.12.1989թ./ և Արմինե Վազգենի Մկրտչյանի /ծնված՝ 25.04.1963թ./ սեփականությունը:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8754Ա

11 Դեկտեմբեր 2023թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Թ.ՌՈՍԼԻՆԻ /ՆԱԽԿԻՆ ԼԻՍԻՑՅԱՆ/ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 31/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Թ.Ռոսլինի /նախկին Լիսիցյան/ փողոցի թիվ 31/3 հասցեի բնակիչ Սաքո Կարապետի Մանուկյանի դիմումը պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն և Հռիփսիմե Անդրանիկի Զարգարյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 12.12.2018թ, տրված թիվ 12122018-04-0041 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական, «Աստղիկ Մանուկյան» ԱՁ-ի / որակավորման վկայական թիվ 096 / կողմից 20.10.2022թ կազմված հատակագիծ, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2022MVMGVP / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Թ.Ռոսլինի /նախկին Լիսիցյան/ փողոցի թիվ 31/3 հասցեում գտնվող 0.0349հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 134.4քմ / արտաքին 134.4քմ, ներքին 119քմ / մակերեսով բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով <<ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Թ.Ռոսլինի /նախկին Լիսիցյան/ փողոցի թիվ 31/3 հասցեում գտնվող 0.0349հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 134.4քմ / արտաքին 134.4քմ, ներքին 119քմ / մակերեսով բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները ճանաչել օրինական, որի համար սահմանված 264 634 / երկու հարյուր վաթսունչորս հազար վեց հարյուր երեսունչորս / ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8734Ա

11 մայիսի 2023թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Ե.ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 9 ՇԵՆՔԻ ԹԻՎ 57 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿՑԱԿԱՌՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի փողոցի թիվ 9 շենքի թիվ 57 բնակարանի բնակիչ Մարտիրոս Գալուստի Նավասարդյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն և Գյուլնարա Թովմասի Նավասարդյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 28.10.2021թ. տրված թիվ 28102021-04-0097 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական, «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 13.03.2023թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 202355RLYM/, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի փողոցի թիվ 9 շենքի թիվ 57 բնակարանին կից ինքնակամ կառուցված 39.9քմ մակերեսով կցակառույցի օրինականացման խնդրանքով:

Ինքնակամ կցակառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառուցված կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի փողոցի թիվ 9 շենքի թիվ 57 բնակարանին կից ինքնակամ կառուցված 39.9քմ մակերեսով կցակառույցը ճանաչել օրինական, որի համար սահմանված վճարը կազմում է 23 569 / քսաներեք հազար հինգ հարյուր վաթսունինը / ՀՀ դրամ:
2. Շենքի զբաղեցրած հողամասը՝ անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցել շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8744Ա

11 նոյեմբեր 2023թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Ե.ՉԱՐԵՆՑԻ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 630 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ՊԱՐԻՍՊԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ.Լերմոնտովի փողոցի թիվ 22 տան բնակիչ Անահիտ Ժորժիկի Գրիգորյանի դիմումը պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 11.06.2018թ, տրված թիվ 11062018-04-0019 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական, «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի / որակավորման վկայական թիվ 0244 / կողմից 28.03.2023թ կազմված հատակագիծ, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 20234S3RAU / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի 1-ին թաղամասի թիվ 630 հասցեում գտնվող 0.0395հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 115.6քմ / արտաքին 115.6քմ, ներքին 94.9քմ / մակերեսով բնակելի տունը և պարիսպը օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով << ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին >> 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի 1-ին թաղամասի թիվ 630 հասցեում գտնվող 0.0395հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 115.6քմ / արտաքին 115.6քմ, ներքին 94.9քմ / մակերեսով բնակելի տունը և պարիսպը ճանաչել օրինական, որի համար սահմանված 193 399 / հարյուր իննսուներեք հազար երեք հարյուր իննսունինը / ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկվելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8454Ա

11 դեկտեմբեր 2023թ. Է. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՐԲ Մ.ՄԱՇՏՈՑԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 71 ՇԵՆՔԻ ԹԻՎ 9 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿՑԱԿԱՌՈՒՅՑԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ ԹՎՈՎ 1 ԴՌԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 71 շենքի թիվ 9 բնակարանի բնակիչ Արմեն Ալբերտի Հայրապետյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն, Սիլվա Սերյոժայի Վարդանյանին, Ռուզաննա Ալբերտի Հայրապետյանին և Նաիրա Ալբերտի Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ ՀՀ <<Արմավիրի մարզի>> նոտարական տարածքի նոտար Նառա Սամվելի Հովհաննիսյանի կողմից 09.03.2023թ. հաստատված թիվ 1183 և 1185 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրեր, 03.11.1995թ. տրված սեփականության վկայագիր, «Աստղիկ Մանուկյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 096/ կողմից 28.03.2023թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2023TVGLYA / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 71 շենքի թիվ 9 բնակարանին կից ինքնակամ կառուցված 11.6քմ մակերեսով կցակառույցի և ինքնակամ բացված թվով 1 դռան օրինականացման խնդրանքով:

Ինքնակամ կցակառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառուցված կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 71 շենքի թիվ 9 բնակարանին կից ինքնակամ կառուցված 11.6քմ մակերեսով կցակառույցը և ինքնակամ բացված թվով 1 դուռը ճանաչել օրինական, որի համար սահմանված վճարը կազմում է 10 376 / տաս հազար երեք հարյուր յոթանասունվեց / ՀՀ դրամ:
2. Շենքի զբաղեցրած հողամասը անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցել շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 876Կ

11 մայիսի 2023թ. Է. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԶՎԱՐԹՆՈՑ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 2 ՇԵՆՔԻ ԹԻՎ 63 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿՑԱԿԱՌՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զվարթնոց թաղամասի թիվ 2 շենքի թիվ 63 բնակարանի բնակիչ Սամվել Հովսեփի Հովսեփյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 02.09.2005թ. տրված թիվ 1980435 սեփականության վկայական և «Ավագ Ավագյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 23.03.2023թ. կազմված հատակագիծ / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զվարթնոց թաղամասի թիվ 2 շենքի թիվ 63 բնակարանին կից ինքնակամ կառուցված 43.9քմ մակերեսով կցակառույցի օրինականացման խնդրանքով:

Ինքնակամ կցակառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառուցված կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զվարթնոց թաղամասի թիվ 2 շենքի թիվ 63 բնակարանին կից ինքնակամ կառուցված 43.9քմ մակերեսով կցակառույցը ճանաչել օրինական, որի համար սահմանված վճարը կազմում է 25 932 / քսանհինգ հազար ինը հարյուր երեսուներկու / ՀՀ դրամ:
2. Շենքի զբաղեցրած հողամասը անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցել շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 877Ա

11 դեկտեմբեր 2023թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Արագածի զանգված թիվ 6 շենքի թիվ 44 բնակարանի բնակիչ՝ Գագիկ Հակոբի Հավաղյանի դիմումը իրեն պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 20042018-04-0007 տրված՝ 20.04.2018թ., «Զիվան Հարությունյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0390/ կողմից 19.04.2023թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04002PWJJQWM, 04002BHNPQFU/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի 2-րդ զանգվածի թիվ 121 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված՝ 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Արագածի 2-րդ զանգված թիվ 121 բնակելի տուն,

Առանձնացվող հատված՝ 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Արագածի 2-րդ զանգված թիվ 121/2 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8784

11 նոյեմբեր 2023թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 302/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ՊԱՐԻՄՊԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ /ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ/ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքը, համաձայն ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման և համայնքի ղեկավարի 27.03.2023թ. թիվ 533Ա որոշման առաջարկել է կառույցն իրականացնող անձանց՝ Վասակ Հարությունի Մարկոսյանին, Ռուզաննա Ֆելիքսի Մարկոսյանին և Գայանե Վասակի Մարկոսյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան 1-ին թաղամասի թիվ 302/2 հասցեում գտնվող՝ 216.6քմ / 216.6քմ արտաքին և 180.3քմ ներքին/ մակերեսով բնակելի տունը, պարիսպը և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0861հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:

Վասակ Հարությունի Մարկոսյանը, Ռուզաննա Ֆելիքսի Մարկոսյանը և Գայանե Վասակի Մարկոսյանը տվել են իրենց գրավոր համաձայնությունը՝ գնելու այն, ՀՀ կառավարության 18.05.2006թ թիվ 912-Ն որոշմամբ սահմանված գների՝ 216.6քմ / 216.6քմ արտաքին և 180.3քմ ներքին/ մակերեսով բնակելի տունը և պարիսպը 1 087 116 / մեկ միլիոն ութսունյոթ հազար հարյուր տասնվեց / ՀՀ դրամ և 0.0861հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը կադաստրային արժեքի չափով 2 486 138 / երկու միլիոն չորս հարյուր ութսունվեց հազար հարյուր երեսունութ / ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վասակ Հարությունի Մարկոսյանին, Ռուզաննա Ֆելիքսի Մարկոսյանին և Գայանե Վասակի Մարկոսյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ վաճառել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան 1-ին թաղամասի թիվ 302/2 հասցեում գտնվող՝ 216.6քմ / 216.6քմ արտաքին և 180.3քմ ներքին/ մակերեսով բնակելի տունը, պարիսպը և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0861հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:
2. Հանձնարարել քաղաքաշինության և հողաշինության բաժնին Վասակ Հարությունի Մարկոսյանի, Ռուզաննա Ֆելիքսի Մարկոսյանի և Գայանե Վասակի Մարկոսյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8794

«12» մայիսի 2023թ.

ք. Էջմիածին

ԶԱՐԶԱՆԴ ՍԵԴՐԱԿԻ ՍԱՐՈՅԱՆԻՆ ԽՆԱՄԱԿԱԼԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 41-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 02-ի N 631–Ն որոշմամբ, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Չարենցի 4-րդ շենքի 36-րդ բնակարանի բնակիչ Զարզանդ Սեդրակի Սարոյանի 12.05.2023թ. դիմումը, Վաղարշապատ համայնքի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 15.05.2023թ. թիվ 16 նիստի արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Անչափահաս Վահրամ Սեդրակի Սարոյանի /ծնված՝ 12.10.2010թ., ծննդյան վկայական՝ I-ԺԴ 254094/ նկատմամբ խնամակալ նշանակված Զարզանդ Սեդրակի Սարոյանին /ծնված՝ 13.11.1990թ., անձնագիր՝ AV 0641135/ ազատել խնամակալի պարտականություններից:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8820

«12» հունիսի 2023թ.

ք. Էջմիածին

ՋՈՅԱ ՀԵՆՐԻԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏՐՈՆԱԺ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-36-րդ և 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 02-ի N631–Ն որոշմամբ, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի Բաղրամյան փողոց 2-րդ տուն հասցեի բնակիչ Զոյա Հենրիկի Մանուկյանի 11.05.2023թ.-ի դիմումը, Վաղարշապատ համայնքի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 15.05.2023թ. թիվ 16 նիստի արձանագրությունը, ուսումնասիրություններն ու փաստերը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի Բաղրամյան փողոց 2-րդ տուն հասցեի բնակիչ Զոյա Հենրիկի Մանուկյանի /ծնված՝ 21.06.1969թ., անձնագիր՝ AT 0641437/ նկատմամբ սահմանել պատրոնաժ՝ պատրոն նշանակելով որդուն՝ Ալբերտ Կարապետի Սահակյանին /ծնված՝ 29.10.1992թ., անձնագիր՝ AL 0214961/:
2. Հսկողություն սահմանել Զոյա Հենրիկի Մանուկյանի նկատմամբ պատրոն նշանակված Ալբերտ Կարապետի Սահակյանի գործունեության նկատմամբ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 881Կ

12 մայիսի 2023թ.

ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Ե.ՉԱՐԵՆՑԻ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 406/7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ /ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ/ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքը, համաձայն ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման և համայնքի ղեկավարի 30.03.2023թ. թիվ 570Ա և 02.05.2023թ. թիվ 758Ա որոշումների առաջարկել է կառույցն իրականացնող անձին՝Մասիս Պողոսի Մաթևոսյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի 1-ին թաղամասի թիվ 406/7 հասցեում գտնվող՝ 22.8քմ / 22.8քմ արտաքին և 22.35քմ ներքին/ մակերեսով ավտոտնակը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.00277հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:

Մասիս Պողոսի Մաթևոսյանը տվել է իր գրավոր համաձայնությունը՝ գնելու այն, ՀՀ կառավարության 18.05.2006թ թիվ 912-Ն որոշմամբ սահմանված գների՝22.8քմ / 22.8քմ արտաքին և 22.35քմ ներքին/ մակերեսով ավտոտնակի համար 38 145 / երեսունութ հազար հարյուր քառասունհինգ / ՀՀ դրամ և 0.00277հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը կադաստրային արժեքի չափով 79 984 / յոթանասունինը հազար ինը հարյուր ութսունչորս / ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Մասիս Պողոսի Մաթևոսյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ վաճառել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի 1-ին թաղամասի թիվ 406/7 հասցեում գտնվող՝ 22.8քմ / 22.8քմ արտաքին և 22.35քմ ներքին/ մակերեսով ավտոտնակը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.00277հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:
2. Հանձնարարել քաղաքաշինության և հողաշինության բաժնին Մասիս Պողոսի Մաթևոսյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 88/24

15 մայիսի 2023թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե. Չարենցի փողոցի թիվ 9 շենքի 2 բնակարանի բնակիչ՝ Գևորգ Աղասինի Գևորգյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե. Չարենցի փողոցի թիվ 11 շենքի 10 բնակարանին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 03052023-04-0064 տրված՝ 03.05.2023թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04002ZYXSNEY տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Ե. Չարենցի փողոց թիվ 11 շենք թիվ 12/1 բնակարան :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8834

16 մայիսի 2023 թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Երևան քաղաքի Շիրակի 4-րդ նրբանցքի թիվ 5 շենքի թիվ 20 բնակարանի բնակիչ՝ Էդգար Միշայի Սողոմոնյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար՝ Նառա Սամվելի Հովհաննիսյանի կողմից 26.04.2023թ. հաստատված 1951 գրանցամատյանով գրանցված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04081APG9GHZ/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք գյուղ Ոսկեհատ, 18-րդ փողոց թիվ 13 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8841Ա

15 նոյեմբեր 2023թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՐԲ Մ.ՄԱՇՏՈՑԻ ՓՈՂՈՑԻ 2-ՐԴ ՓԱԿՈՒՂՈՒ ԹԻՎ 77 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԸ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ ԹՎՈՎ 1 ԴՈՒՌԸ ԵՎ 1 ԲԱՑՎԱԾՔԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ծովակալ Իսակովի փողոցի 3-րդ փակողու թիվ 6 տան բնակիչ Մայիս Բարսեղի Աթանյանի դիմումը պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն և Լևոն Բարսեղի Աթանյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 09.07.2004թ, տրված թիվ 1119034 սեփականության վկայական, «Ջիվան Հարությունյան» ԱՁ-ի / որակավորման վկայական թիվ 0390 / կողմից 15.12.2022թ կազմված հատակագիծ, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2023GJ8AUX և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04002UBA6LGA / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի 2-րդ փակուղու թիվ 77 հասցեում գտնվող 0.695հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված ընդհանուր 243.9քմ / արտաքին 243.9քմ, ներքին 225.3քմ / մակերեսով արտադրամասը, օժանդակ շինությունները, ինքնակամ բացված թվով 1 դուռը և 1 բացվածքը օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով << ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին >> 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի 2-րդ փակուղու թիվ 77 հասցեում գտնվող 0.695հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 243.9քմ / արտաքին 243.9քմ, ներքին 225.3քմ / մակերեսով արտադրամասը, օժանդակ շինությունները, ինքնակամ բացված թվով 1 դուռը և 1 բացվածքը ճանաչել օրինական, որի համար սահմանված 615 414 / վեց հարյուր տասնհինգ հազար չորս հարյուր տասնչորս / ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 885Կ

15 մայիսի 2023թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Իսակովի փողոցի թիվ 3-րդ փակուղի թիվ 6 տան բնակիչ՝ Մայիս Բարսեղի Աթանյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքում գտնվող Վաղարշապատ ԳԿՏ շենք-շինություններին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 1119034 տրված՝ 09.07.2004թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002UBA6LGA/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Սուրբ Մեսրոպ Մաշտոցի փողոցի թիվ 2-րդ փակուղի թիվ 77 արտադրամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 88Ա

15 մայիսի 2023թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 03.03.2023Թ. ԹԻՎ 438Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի ղեկավարի 03.03.2023թ. «Անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին» թիվ 438Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
հիմնական մասում նշված «04002JNLTECP» բառերի փոխարեն կարդալ «04002DYBLPXG » բառերը, իսկ եզրափակիչ մասում նշված « 24/66 » բառերի փոխարեն կարդալ « 24/68 » բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8874

15 նոյեմբեր 2023թ. Էջմիածին

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԳՐԱՍԵՆՅԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին » 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 731-Ն և 912-Ն որոշումների պահանջներով, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2022J3AZBJ և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի / որակավորման վկայական թիվ 0244 / կողմից 13.10.2022թ. կազմված հատակագիծը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ծովակալ Իսակովի փողոցում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.0029հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 58.9քմ / 58.9քմ արտաքին և 46.1քմ ներքին/ մակերեսով գրասենյակը համարել Վաղարշապատ համայնքի սեփականություն: Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, նրա զբաղեցրած հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, կառուցված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերին:
2. Օրինականացնել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ծովակալ Իսակովի փողոցում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.0029հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված 58.9քմ / 58.9քմ արտաքին և 46.1քմ ներքին/ մակերեսով գրասենյակը:
3. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ծովակալ Իսակովի փողոցում գտնվող 58.9քմ / 58.9քմ արտաքին և 46.1քմ ներքին/ մակերեսով գրասենյակը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0029հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը առաջարկել գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել կառույցն իրականացնող անձին՝ Սամվել Զավենի Հովհաննիսյանին:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8884

15 մայիսի 2023թ. ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի / որակավորման վկայական թիվ 0244 / կողմից 13.10.2022թ. կազմված հատակագիծը և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002BH8CVXX.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի սեփականություն հանդիսացող Էջմիածին քաղաքի Ծովակալ Իսակովի փողոցում գտնվող գրասենյակին և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0029հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Ծովակալ Իսակովի փողոց թիվ 59/2:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8894

15 մայիսի 2023թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Հ. Թումանյան փողոցի թիվ 38 տան բնակիչ՝ Հայկ Արմենի Ներսիսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Հ. Թումանյան փողոցի թիվ 38 և Հ. Թումանյան փողոցի թիվ 38/2 հասցեների անշարժ գույքերը /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ թիվ 07122022-04-0087 տրված՝ 07.12.2022թ., թիվ 30032023-04-0100 տրված՝ 30.03.2023թ. և Արմավիրի մարզ նոտարական տարածքի նոտար՝ Նառա Սամվելի Հովհաննիսյանի կողմից 05.05.2023թ. հաստատված 2229 գրանցամատյանով գրանցված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 040029FDJHKA/ միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Հ. Թումանյան փողոց թիվ 38 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 890Ա

15 նոյեմբեր 2023թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Սուրբ Մովսես Խորենացու փողոցի թիվ 101 շենքի թիվ 409 բնակարանի բնակիչ՝ Էդգար Վարդանի Թամազյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, 04-002-1049-0028 ծածկագրով անշարժ գույքին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 14042022-04-0044 տրված՝ 14.04.2022թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04002TVTEVPZ/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Էջմիածին-Մարգարա խճուղի թիվ 20/9 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8.91Ա

15 մայիսի 2023թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Ռուբեն Բաբկենի Կարապետյանի լիազորված անձ՝ Ազատ Գրիգորի Ավետիսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքում գտնվող 04-002-0834-0027 ծածկագրով անշարժ գույքին /հիմք՝ ՀԽՍՀ ժողովրդական դեպուտատների Էջմիածնի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 25.07.1990թ. նիստի թիվ 15 արձանագրության /«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Արմավիրի մարզային մասնաճյուղի կողմից 01.03.2023թ. տրված թիվ Ամ-124 արխիվային քաղվածք/ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04002CVZHCCA/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Ա. Խաչատրյան փողոց թիվ 49 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8924

15 նոյեմբեր 2023թ.

ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Ե.ՉԱՐԵՆՑԻ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 518 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ.Լերմոնտովի փողոցի թիվ 22ա տան բնակիչ Գոհար Գրիգորի Շահինյանի դիմումը պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 12.04.2005թ, տրված թիվ 1494419 սեփականության վկայական, «Աստղիկ Մանուկյան» ԱՁ-ի / որակավորման վկայական թիվ 096 / կողմից 05.04.2023թ կազմված հատակագիծ, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 20233KUF2Y և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04002SEFAAGC / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի 1-ին թաղամասի թիվ 518 հասցեում գտնվող 0.0405հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 287.8քմ / արտաքին 287.8քմ, ներքին 246քմ / մակերեսով բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով << ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին >> 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի 1-ին թաղամասի թիվ 518 հասցեում գտնվող 0.0405հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 287.8քմ / արտաքին 287.8քմ, ներքին 246քմ / մակերեսով բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները ճանաչել օրինական, որի համար սահմանված 481 490 / չորս հարյուր ութսունմեկ հազար չորս հարյուր իննսուն / ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին հանձնելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8934

15 մայիսի 2023թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Լերմոնտովի փողոցի թիվ 22ա տան բնակիչ՝ Գոհար Գրիգորի Շահինյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, 04-002-0526-0005 ծածկագրով անշարժ գույքին /հիմք՝ 12.04.2005թ. տրված սեփականության իրավունքի վկայական և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04002SEFAAGC/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Ե. Չարենցի 1-ին թաղամաս թիվ 518 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8944

15 նոյեմբեր 2023թ. ք. Էջմիածին

ՌՈՒԲԻԿ ԵՆՈՔԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՀԵՍՏՆԵՐԻ ՏԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ 873ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՄԱՆ ԵՎ 15.1ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՀԵՍՏՆԵՐԻ ՏԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատի համայնքապետարան է դիմել Ռուբիկ Ենոքի Համբարձումյանի լիազորված անձ Վլադիմիր Սուրենի Մկրտչյանը Էջմիածին քաղաքի Թումանյան փողոցի թիվ 1/10 հասցեում գտնվող, Ռուբիկ Ենոքի Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող / հիմք՝01.05.1997թ. արձանագրություն, 04.06.1997թ. արձանագրություն, լուծարման հաշվեկշիռ և Կաղաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04002TW2CHVB /, արհեստների տան պահպանման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի իրավունքի վերականգնման և օգտագործման նպատակը փոփոխելու խնդրանքով:

Հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 207, 564 հոդվածների , ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և ՀՀ Կառավարության 02.02.2002թ. թիվ 88 որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Թումանյան փողոցի թիվ 1/10 հասցեում գտնվող արհեստների տան պահպանման ու սպասարկման համար անհրաժեշտ 873քմ մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ իրավունքը վերականգնել համաձայն «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 13.12.2022թ. կազմված հատակագծի:
2. Ռուբիկ Ենոքի Համբարձումյանը 873քմ մակերեսով հողամասի նկատմամբ ունի բաժնային սեփականության իրավունք:
3. Վաղարշապատ համայքնի Էջմիածին քաղաքի Թումանյան փողոցի թիվ 1/10 հասցեում գտնվող արհեստների տան օգտագործման նպատակը փոփոխել գեղեցկության սրահի
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 895Ա

15 մայիսի 2023թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Ռուբիկ Ենոքի Համբարձումյանի լիզորված անձ՝ Վլադիմիր Սուրենի Մկրտչյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Հ. Թումանյան փողոցի վրա գտնվող անշարժ գույքին /հիմք՝ 01.05.1997թ. արձանագրություն, 04.06.1997թ. արձանագրություն, լուծարման հաշվեկշիռ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04002TW2CHVB/ տրամադրել հասցե՝Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Հ.Թումանյան փողոց թիվ 1/10 գեղեցկության սրահ:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8964

15 մայիսի 2023թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Արմավիրի մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղի Արցախի փողոցի թիվ 38 տան բնակիչ՝ Գյուլնարա Վայվունու Պողոսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Սուրբ Մովսես Խորենացու փողոցում գտնվող առնտրի սրահին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 2126884 տրված՝ 03.03.2006թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04002SZTYNPQ/ տրամադրել հասցե՝Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Սուրբ Մովսես Խորենացու փողոց թիվ 5 առնտրի սրահ:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8974

15 Դեկտեմբեր 2023թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Նունուշ Ժորայի Թորոսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Սասունցի Դավթի թաղամասում /նախկին Պետ-տնկարան/ գտնվող անշարժ գույքին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 003927 տրված՝ 12.03.1998թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04002TSQNB6A/ տրամադրել հասցե՝Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Սասունցի Դավթի թաղամաս թիվ 24 շենք թիվ 4 բնակարան:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8984

16 մայիսի 2023թ. գ. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 26.10.2021Թ. ՏՐՎԱԾ ԹԻՎ 202 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետի, 37-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ կառավարության 19.03.2015թ թիվ 596-Ն որոշման 131-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Հայկ Նահապետի փողոցի թիվ 5 տան բնակիչ Սոնյա Կարապետի Տրդատյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին համայնքի ղեկավարի 26.10.2021թ. տրված թիվ 202 շինարարության թույլտվությունը ճանաչել ուժը կորցրած:
2. Ապահովել սույն որոշման վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը եռօրյա ժամկետում պատշաճ կարգով ծանուցելով կառուցապատողին և ՀՀ Կադաստրի կոմիտեին՝ կառուցվող շինության նկատմամբ կառուցապատողի գրանցված իրավունքների դադարեցում գրանցելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8994

16 մայիսի 2023թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Մայիսյան փողոցի թիվ 80 տան բնակիչ՝ Գոհար Մակարի Վարդանյանի դիմումը իրեն, Ռուբիկ Սարգսի Հովհաննիսյանին, Ռոբերտ Սարգսի Հովհաննիսյանին և Գուրգեն Սարգսի Հովհաննիսյանին պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 26122022-04-0014 տրված՝ 26.12.2022թ., «Աստղիկ Մանուկյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 096/ կողմից 01.04.2023թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04002NBRPL9H, 04002CXS4GCN, 04002XEWGHTB, 04002RUVLG9N/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մայիսյան փողոցի թիվ 80 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Մայիսյան փողոց թիվ 80 բնակելի տուն,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Մայիսյան փողոց թիվ 80/1 բնակելի տուն,

Առանձնացվող հատված 3-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Մայիսյան փողոց թիվ 80/2 բնակելի տուն,

Առանձնացվող հատված 4-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Մայիսյան փողոց թիվ 80/3 բնակելի տուն :

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 9004

16 մայիսի 2023 թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Լերմոնտովի փողոցի թիվ 27ա տան բնակիչ՝ Հայկ Հմայակի Հակոբյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Չարենցի թաղամասի թիվ 105 հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝. ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 23.03.2023թ. վճիռ գործ թիվ ԱՐԴ/0393/02/22 և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04002FSWPAGS տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք՝ ք.Էջմիածին, Ե. Չարենցի 2-րդ թաղամաս թիվ 105 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 90/4

16 մայիսի 2023թ. ք. Էջմիածին

ՊԵՏՐՈՍ ՍԵՐՈԲԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՄԻՆՉԵՎ 20/ՏՈԿՈՍ/ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3-րդ ենթակետերի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Պետրոս Սերոբի Պետրոսյանի դիմումը իրեն պատկանող /հիմք՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 01.11.2022թ. կայացված վճիռ, քաղաքացիական գործ ԱՐԴ1/0130/02/22 և <<Մելկար>> ՍՊԸ-ի /որակավորման վկայական թիվ 0369/ կողմից 20.03.2023թ. կազմված հատակագիծը/, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի <<Զվարթնոց>> ԳԿՏ տարածքում գտնվող /ծածկագիր 04-002-0308-0006/, 0.9հա գյուղատնտեսական նշանակության հողամասից ավել օգտագործվող 0.0197հա մակերեսով հողամասը իրեն հատկացնելու խնդրանքը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ առաջին պետական գրանցման աշխատանքների ընթացքում կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված փաստացի օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, ընդգրկված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակույթային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, ինչպես նաև չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և չի առաջացնում սերվիտուտ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի <<Զվարթնոց>> ԳԿՏ տարածքում գտնվող /ծածկագիր՝ 04-002-0308-0006/, 0.9հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասին կից ավել օգտագործվող 0.0197 հա մակերեսով հողամասը ճանաչել Պետրոս Սերոբի Պետրոսյանի սեփականությունը:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.ԴԵԼՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 9024

16 մայիսի 2023թ.Ք. ԷՋՄԻԱԾԻՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ <<ՎԱՂԱՐՇԱՊԱՏ>> ԳԿՏ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻՑ ԱՎԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի փողոցի թիվ 25 շենքի թիվ 39 բնակարանի բնակիչ Աշոտ Հակոբի Մարգարյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան, իրեն և Ամաշխարիկ Սարգսի Հարությունյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N2793441 տրված 24.08.2010թ./, <<Վաղարշապատ>> ԳԿՏ տարածքում գտնվող /ծածկագիր՝ 04-002-0104-0004/, 0.4674հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքը՝ խաղողի այգին ավելի ցածրարժեք հողատեսքի՝ վարելահողի փոխադրելու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 12.11.2009թ. թիվ 151 կարգադրությամբ ստեղծված բարձրարժեք հողատեսքը ավելի ցածրարժեք հողատեսքի փոխադրող հանձնաժողովի 05.05.2023թ. N01/14/03154-2023 եզրակացությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի <<Վաղարշապատ>> ԳԿՏ տարածքում գտնվող /ծածկագիր՝ 04-002-0104-0004/, 0.4674հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքը՝ խաղողի այգին փոխադրել ավելի ցածրարժեք հողատեսքի՝ վարելահողի:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 903Ա

16 մայիսի 2023թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ <<ՎԱՂԱՐՇԱՊԱՏ>> ԳԿՏ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻՑ ԱՎԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի Նաիրյան փողոցի թիվ 129 շենքի թիվ 30 բնակարանի բնակիչ Սմբատ Արշակի Ենոքյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան, իրեն պատկանող /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ N09042021-04-0006 տրված 09.04.2021թ., N14062021-04-0082 տրված 14.06.2021թ./, <<Վաղարշապատ>> ԳԿՏ տարածքում գտնվող /ծածկագրեր՝ 04-002-0199-0127, 04-002-0199-0047/, 1.6507հա ընդհանուր մակերեսով գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքը՝ պտղատու այգին ավելի ցածրարժեք հողատեսքի՝ վարելահողի փոխադրելու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 12.11.2009թ. թիվ 151 կարգադրությամբ ստեղծված բարձրարժեք հողատեսքը ավելի ցածրարժեք հողատեսքի փոխադրող հանձնաժողովի 05.05.2023թ. N01/14/03154-2023 եզրակացությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի <<Վաղարշապատ>> ԳԿՏ տարածքում գտնվող /ծածկագրեր՝ 04-002-0199-0127, 04-002-0199-0047/, 1.6507հա ընդհանուր մակերեսով գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքը՝ պտղատու այգին փոխադրել ավելի ցածրարժեք հողատեսքի՝ վարելահողի:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 904Ա

16 դեկտեմբեր 2023թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ <<ՎԱՂԱՐՇԱՊԱՏ>> ԳԿՏ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻՑ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատի համայնքապետարան է դիմել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի զանգվածի թիվ 14բ տան բնակիչ Դավիդ Սերոբի Պետրոսյանը իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքներիի պետական գրանցման վկայական N26042023-04-0008 տրված 28.11.2014թ./, <<Զվարթնոց>> ԳԿՏ տարածքում գտնվող /ծածկագիր՝ 04-002-0329-0003/ 0.9հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության ցածրարժեք հողատեսքը՝ վարելահողը ավելի բարձրարժեք հողատեսքի՝ պտղատու այգու փոխադրելու խնդրանքով:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի <<Զվարթնոց>> ԳԿՏ տարածքում գտնվող /ծածկագիր՝ 04-002-0329-0003/ 0.9հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության ցածրարժեք հողատեսքը՝ վարելահողը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ պտղատու այգի /կորիզավոր/:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԵՎՈՐԳ ՊԱՊԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 9054

17 մայիսի 2023թ. Գ. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 30.01.2023Թ. ԹԻՎ 95Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի ղեկավարի 30.01.2023թ. թիվ 95Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
հիմնական մասում նշված « 02.09.2022թ. » բառերի փոխարեն կարդալ « 02.05.2023թ. » բառերը
եզրափակիչ մասում նշված «0.00275հա մակերեսով» բառերի փոխարեն կարդալ «0.00273հա մակերեսով» բառերը, իսկ « 27.5քմ / 27.5քմ արտաքին և 22.4քմ ներքին » բառերի փոխարեն կարդալ « 27.3քմ / 27.3քմ արտաքին և 22.4քմ ներքին » բառերը.
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 906Ա

17 մայիսի 2023թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 30.01.2023Թ. ԹԻՎ 96Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի ղեկավարի 30.01.2023թ. «Անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին» թիվ 96Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
հիմնական մասում նշված « 02.09.2022թ. » բառերի փոխարեն կարդալ « 02.05.2023թ. » բառերը, իսկ եզրափակիչ մասում նշված « 0.00275 » բառերի փոխարեն կարդալ « 0.00273 » բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 907-Ա

17 մայիսի 2023թ.Ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Սուրբ Մովսես Խորենացու փողոցի թիվ 26 շենքի թիվ 5 բնակարանի բնակիչ՝ Երանուհի Արտավազդի Գասպարյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մովսես Խորենացու փողոցի թիվ 26 շենքի թիվ 50 և Սուրբ Մովսես Խորենացու փողոցի թիվ 26 շենքի թիվ 5 հասցեների անշարժ գույքերը /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ թիվ 22022023-04-0067 տրված՝ 22.02.2023թ. և թիվ 30032023-04-0058 տրված՝ 03.05.2005թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04002MBGNYJ5 միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝ Վաղարշապատ համայնքՔ. Էջմիածին, Սուրբ Մովսես Խորենացու փողոց թիվ 26 շենք թիվ 5 բնակարան:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 908Ա

17 մայիսի 2023թ.

ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՐԲ Մ.ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 26 ՇԵՆՔԻ ԹԻՎ 50 ԽԱՆՈՒԹԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Խորենացու փողոցի թիվ 26 շենքի թիվ 5 բնակարանի բնակիչ Երանուհի Արտավազդի Գասպարյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 22.02.2023թ. տրված թիվ 22022023-04-0067 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Խորենացու փողոցի թիվ 26 շենքի թիվ 50 խանութի նպատակային նշանակությունը՝ բնակելիի, իսկ գործառնական նշանակությունը բնակարանի փոփոխելու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 02.02.2002թ. թիվ 88 որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Խորենացու փողոցի թիվ 26 շենքի թիվ 50 խանութի նպատակային նշանակությունը հասարակականից փոփոխել բնակելիի, իսկ գործառնական նշանակությունը՝ բնակարանի:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 909-Լ

«17» մայիսի 2023թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2023Թ. ԲՅՈՒՋԵԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով և ելնելով անհրաժեշտությունից.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Աղբահանման /բաժին 05, խումբ 1, դաս 1/ <Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ> հոդվածի /հոդ. 4111/ 2-րդ եռամսյանկը նվազեցնել 500.0 հազ. դրամ և ավելացնել 4-րդ եռամսյակին:
2. Աղբահանման /բաժին 05, խումբ 1, դաս 1/ <Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում> հոդվածի /հոդ. 4252/ 4-րդ եռամսյանկը նվազեցնել 500.0 հազ. դրամ և ավելացնել 2-րդ եռամսյակին:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 91Ա

14 Նոյեմբեր 2023թ. ք. Էջմիածին

ԳԱԳԻԿ ԳԵՎՈՐԳԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 09/23 վարչական գործը՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զվարթնոց թաղամասում Գագիկ Գևորգի Մուրադյանի կողմից ոչ սահմանված տեղում առևտուր իրականացնելու վերաբերյալ, **պարզեց, որ**

Գագիկ Գևորգի Մուրադյանի (հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Զվարթնոց թաղ., թիվ 16 շենք, թիվ 34 բն. անձնագիր՝ AU0650321, տրված 16.03.2022թ-ին, 057-ի կողմից) կողմից Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զվարթնոց թաղամասում կատարվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման հատկանիշներ պարունակող արարք, այն է՝ ոչ սահմանված տեղում առևտուր իրականացնելը, ինչի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի պետ՝ Ա. Ոսկանյանի 11.04.2023 թվականի թիվ 46-4/27-2498 զրության և կից նյութերի /համայնքապետարան մուտքագրվել է 19.04.2023թ./ հիման վրա 2023 թվականի ապրիլի 19-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի և նույն օրենքի 31-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Վաղարշապատի համայնքապետարանը, հրավիրել և անցկացրել է լսում որին Գագիկ Գևորգի Մուրադյանը պատշաճ ծանուցվել է, սակայն չի ներկայացել լսմանը:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

- ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի պետ Ա.Ոսկանյանի 11.04.2023թի թիվ 46-4/27-2498 զրությունը և կից նյութերը:
- Էջմիածին քաղաքի Բնակարանային կոմունալ վարչության տեսուչի կողմից 05.05.2023 թվականին կազմված զեկուցագիրը և լուսանկարները:
- Հանձնաժողովի 27.04.2023թ. թիվ 09/23 վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ արձանագրությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Գագիկ Գևորգի Մուրադյանի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զվարթնոց թաղամասում իրականացրել է առևտուր, դրա համար ոչ սահմանված տեղում:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2023 թվականի ապրիլի 27-ին Վաղարշապատի համայնքապետարանում հրավիրվել է լսում, որին Գագիկ Գևորգի Մուրադյանը չի ներկայացել:

Հրավիրված վարչական լսումների վերաբերյալ ծանուցումն ուղարկվել է Գագիկ Գևորգի Մուրադյանին և միաժամանակ հրապարակվել է ՀՀ հրապարակային ծանուցումների azdarar.am պաշտոնական կայքում:

Գագիկ Գևորգի Մուրադյանը, պատշաճ կարգով ծանուցվել է վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին, սակայն չի ներկայացել վարչական վարույթի լսմանը, չի ներկայացրել բացատրություններ և միջնորդություններ:

ՀՀ ոստիկանություն Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի պետ Ա.Ոսկանյանի զրությունը ստանալուց հետո Էջմիածին քաղաքի <<Բնակարանային կոմունալ վարչություն>> բյուջետային հիմնարկի տեսուչի կողմից այց է կատարել իրավախախտման վայր, հիշյալ վայր այց է կատարվել նաև 04.05.2023 թվականին: Այցերի ընթացքում պարզվել է, որ Գագիկ Գևորգի Մուրադյանը ոստիկանության աշխատակցի բանավոր նախազգուշացումից հետո /արձանագրություն կազմելու ժամանակ/, վերացրել է իրավախախտման հետևանքները և չի իրականացնում առևտուր ոչ սահմանված վայրում:

Հիմք ընդունելով վերոգրյալը, հաշվի առնելով կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, որպես մեղմացնող հանգամանք պատասխանողի կողմից իրավախախտման հետևանքները կամավոր վերացնելը, ինչպես նաև հիմք ընդունելով Էջմիածին քաղաքի <<Բնակարանային կոմունալ վարչություն>> բյուջետային հիմնարկի աշխատակիցների կողմից 05.05.2023 թվականին կազմված զեկուցագիրը և լուսանկարները, վարչական գործով ներկայացված բոլոր նյութերը նախապատրաստվել, ուսումնասիրվել են և ներկայացվել են համայնքի ղեկավարին:

Վարչական ակտ ընդունելու իրավական հիմքերը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 162 հոդվածի 1-ին մասի համաձայն ոչ սահմանված տեղերում կամ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ առևտուր իրականացնելը կամ ծառայություն մատուցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով՝ առևտրի կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա:

<<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ առևտրի իրականացման վայրի տեսակներն են՝ առևտրի կենտրոնները, սպառողական ապրանքների շուկաները, գյուղատնտեսական արտադրանքի շուկաները, կենդանիների շուկաները, տոնավաճառները (վերնիսաժները) և ցուցահանդես-վաճառքի անցկացման վայրերը:

Նույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց թույլատրվում է առուվաճառք իրականացնել միայն գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում, ավտոտրանսպորտային միջոցների շուկաներում, կենդանիների շուկաներում և տոնավաճառներում (վերնիսաժներում): Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց արգելվում է իրականացնել վաճառք սույն օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ և 12-րդ մասերի, 14-րդ մասի «ա» և «բ» ենթակետերով նշված ապրանքների, ինչպես նաև համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա սննդամթերքի:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 23-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի համաձայն՝ վարչական իրավախախտումներ կատարելու համար կարող է կիրառվել նախազգուշացումը: Նույն օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝ նախազգուշացումը որպես վարչական տույժի միջոց արվում է գրավոր: Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նախազգուշացումը արձանագրվում է այլ սահմանված եղանակով:

Նույն հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կարող են նախատեսվել վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող նաև այլ հանգամանքներ: Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը լուծող մարմինը (պաշտոնատար անձը) կարող է մեղմացուցիչ համարել նաև այնպիսի հանգամանքներ, որոնք նշված չեն օրենսդրության մեջ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասի համաձայն՝ վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ են համարվում՝

1) մեղավորի անկեղծ զղջումը.

2) իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառած վնասը կամավոր հատուցելը կամ վերացնելը.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասով, 23-րդ, 25-րդ, 32-րդ հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, <<Առևտրի և ծառայությունների մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով, 5-րդ հոդվածի 1-ին մասով և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գագիկ Գևորգի Մուրադյանի նկատմամբ նշանակել վարչական տույժ՝ նախազգուշացման ձևով:
2. Նախազգուշացնել Գագիկ Գևորգի Մուրադյանին, որ սույն որոշմամբ տուգանք նշանակելուց հետո Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, առևտրի կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ:
3. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 911Ա

17 դեկտեմբեր 2023թ. ք. Էջմիածին

ՀԱԿՈԲ ՍԵՐՈԲԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 12/23 վարչական գործը՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցում Հակոբ Սերոբի Գասպարյանի կողմից ոչ սահմանված տեղում առևտուր իրականացնելու վերաբերյալ, **պարզեց, որ**

Հակոբ Սերոբի Գասպարյանի (հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Մայակովսկու փող., թիվ 6 տուն, անձնագիր՝ AT06565654, տրված 04.02.2021 թ-ին, 057-ի կողմից) կողմից Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցում կատարվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման հատկանիշներ պարունակող արարք, այն է՝ ոչ սահմանված տեղում առևտուր իրականացնելը, ինչի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի պետ՝ Ա. Ոսկանյանի 12.04.2023 թվականի թիվ 46-4/27-2575 գրության և կից նյութերի /համայնքապետարան մուտքագրվել է 19.04.2023թ./ հիման վրա 2023 թվականի ապրիլի 19-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի և նույն օրենքի 31-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Վաղարշապատի համայնքապետարանը, հրավիրել և անցկացրել է լսում որին Հակոբ Սերոբի Գասպարյանը պատշաճ ծանուցվել է, սակայն չի ներկայացել լսմանը:

<u>Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը</u>.

- ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի պետ Ա.Ոսկանյանի 12.04.2023թի թիվ 46-4/27-2575 գրությունը և կից նյութերը:
- Էջմիածին քաղաքի Բնակարանային կոմունալ վարչության տեսուչի կողմից 05.05.2023 թվականին կազմված զեկուցագիրը և լուսանկարները:
- Հանձնաժողովի 27.04.2023թ. թիվ 12/23 վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ արձանագրությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Հակոբ Սերոբի Գասպարյանի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցում իրականացրել է առևտուր, դրա համար ոչ սահմանված տեղում:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2023 թվականի ապրիլի 27-ին Վաղարշապատի համայնքապետարանում հրավիրվել է լսում, որին Հակոբ Սերոբի Գասպարյանը չի ներկայացել:

Հրավիրված վարչական լսումների վերաբերյալ ծանուցումն ուղարկվել է Հակոբ Սերոբի Գասպարյանին և միաժամանակ հրապարակվել է ՀՀ հրապարակային ծանուցումների azdarar.am պաշտոնական կայքում:

Հակոբ Սերոբի Գասպարյանը, պատշաճ կարգով ծանուցվել է վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին, սակայն չի ներկայացել վարչական վարույթի լսմանը, չի ներկայացրել բացատրություններ և միջնորդություններ:

ՀՀ ոստիկանություն Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի պետ Ա.Ոսկանյանի գրությունը ստանալուց հետո Էջմիածին քաղաքի <<Բնակարանային կոմունալ վարչություն>> բյուջետային հիմնարկի տեսուչի կողմից այց է կատարել իրավախախտման վայր, հիշյալ վայր այց է կատարվել նաև 05.05.2023 թվականին: Այցերի ընթացքում պարզվել է, որ Հակոբ Սերոբի Գասպարյանը ոստիկանության աշխատակցի բանավոր նախազգուշացումից հետո /արձանագրություն կազմելու ժամանակ/, վերացրել է իրավախախտման հետևանքները և չի իրականացնում առևտուր ոչ սահմանված վայրում:

Հիմք ընդունելով վերոգրյալը, հաշվի առնելով կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, որպես մեղմացնող հանգամանք պատասխանողի կողմից իրավախախտման հետևանքները կամավոր վերացնելը, ինչպես նաև հիմք ընդունելով Էջմիածին քաղաքի <<Բնակարանային կոմունալ վարչություն>> բյուջետային հիմնարկի աշխատակիցների կողմից 05.05.2023 թվականին կազմված զեկուցագիրը և լուսանկարները, վարչական գործով ներկայացված բոլոր նյութերը նախապատրաստվել, ուսումնասիրվել են և ներկայացվել են համայնքի ղեկավարին:

Վարչական ակտ ընդունելու իրավական հիմքերը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 162 հոդվածի 1-ին մասի համաձայն ոչ սահմանված տեղերում կամ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ առևտուր իրականացնելը կամ ծառայություն մատուցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով՝ առևտրի կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա:

<<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ առևտրի իրականացման վայրի տեսակներն են՝ առևտրի կենտրոնները, սպառողական ապրանքների շուկաները, գյուղատնտեսական արտադրանքի շուկաները, կենդանիների շուկաները, տոնավաճառները (վերնիսաժները) և ցուցահանդես-վաճառքի անցկացման վայրերը:

Նույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց թույլատրվում է առուվաճառք իրականացնել միայն գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում, ավտոտրանսպորտային միջոցների շուկաներում, կենդանիների շուկաներում և տոնավաճառներում (վերնիսաժներում): Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց արգելվում է իրականացնել վաճառք սույն օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ և 12-րդ մասերի, 14-րդ մասի «ա» և «բ» ենթակետերով նշված ապրանքների, ինչպես նաև համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա սննդամթերքի:

